ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«31» 07 2018թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-158/18

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ղեկավարի 2018 թվականի թիվ 35 որոշումը:

Առդիր 2 թերթ

Համայնքի ղեկավար՝ Գ. Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
.ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիս 2018 թվականի N 35-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 06-075-0009-0015 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀԱՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Մեծ Պարնի համայնքում 0009-0015 ծածկագրի տակ գտնվող 0.133 հա հողամասը հանդիսանում է Սամվել, Գևորգ, Մաթևոս, Հեղինե, Հերմինե Կոծինյանների սեփականությունը, որին տիրապետել, տնօրինել և օգտագործել են մինչև սեփականաշնորհումը:

Նշված հողամասի վրա սեփական միջոցներով 1986թ-ին վերջիններիս կողմից կառուցվել է բնակելի տուն և ավտոտնակ, որոնք առաջին պետական գրանցման ժամանակ հաշվառվել, սակայն գրանցման մարմին բացիթողության արդյունքում պետական գրանցում չեն ստացել:Նկատի ունենալով , որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում , կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով , չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում:

Ղեկավարվելով «ՏԻՄ» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, իրավունք փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների և օժանդակ կառուցված շինությունների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով , ինքնակամ կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով , ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն հրահանգով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, և հիմք ընդունելով հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1992թ. թիվ 1 որոշումը, հողի սեփականության իրավունքի պետական գրանցման 934726 վկայականը, «Մել և Միլ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը և Սամվել Կոծինյանի և մյուսների դիմում խնդրանքը

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Օրենքի ուժով վերականգնել և ճանաչել Սամվել, Գևորգ, Մաթևոս, Հեղինե, Հերմինե Կոծինյանների սեփականության իրավունքը Մեծ Պարնի համայնքում 0009-0015 ծածկագրի տակ սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.133 հա տնամերձ հողամասի վրա 1986թ. սեփական միջոցներով կառուցված 162.75 քմ մակերեսով բնակելի տան և 19.61 քմ ավտոտնակի նկատմամբ:

2. Անշարժ գույքերին տրամադրել փոստային հասցե 2-րդ փողոց 8-րդ տուն:

3. Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորաբաժանմանը որպես հիմք վերը նշված գույքերի պետական գրանցում տալու համար:

4. Որոշումը ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՊԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ՄԱՐԶ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 06801098